ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/28

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
Բողոք բերող՝ «Խաչպար» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով բաց մրցույթ, բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Խաչպար» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 14.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ին «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 14.02.2020թ.-ին, նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և հրապարակվել www.gnumner.am կայքում ու 21.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

21.02.2020թ.-ին Բողոքի քննությունն ավարտվել է և որոշման հրապարակման օր է նշանակվել 13.03.2020թ.-ին:

2. <u>«Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը</u>.

«Խաչպար» ՍՊԸ-ն 14.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ն «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով Հայտարարություն է հրապարակել «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 10-ի թիվ 1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերով պահանջվում են թվով 4 չափաբաժիններով ապրանքներ (կից փաստաթուղթ թիվ 2):

Պատվիրատուն կատարելով գնումների գործընթացները կարգավորող իրավական ակտերով սահմանված պահանջների մի մասը՝ Հայտարարության տեքստը հրապարակել է նաև ռուսերեն լեզվով, սակայն չի կատարել այդ նույն իրավական ակտերով սահմանված պահանջների մյուս մասերը ռուսերեն լեզվով չի հրապարակել նաև Հրավերի տեքստը:

«Խաչպար» ՍՊԸ-ն ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. փետրվարի 10-ի թիվ 1 որոշմամբ հաստատված «Բժշկական նշանակության ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

ա) Համաձայն ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի

«3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:»

բ) Համաձայն ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի

«1. Գնմանը վերաբերող փաստաթղթերը կազմվում և սույն օրենքով նախատեսված դեպքերում տեղեկագրում հրապարակվում են հայերեն, իսկ գնումների, այդ թվում՝ նախաորակավորման հայտարարությունները՝ նաև անգլերեն և ռուսերեն:»

գ) Համաձայն ՀՀ Կառավարության թիվ 526-Ն Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետի «1) գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով:»

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ ԲԿ» ՓԲԸ-ի «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի կողմից չեն կատարվել վերոգրյալ իրավական ակտերի պահանջները՝ հրավերի տեքստը չի հրապարակվել նաև ռուսերեն լեզվով:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Խաչպար» ՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝ խնդրել է պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ին «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

3. <u>«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 17.02.2020թ.-ին թիվ /ԲՔԱ-ԼՕ/2/ 2120-2020 գրությամբ դիմել է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ին (այսուհետ նաև՝ Պատվիրատու), հնարավորություն տալով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.02.2020թ.-ի ներկայացված բողոքի

վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

««Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Բժշկական Կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի բողոքարկման վերաբերյալ

Խաչպար ՍՊ ընկերությունը 14.02.2020թ.-ին ներկայացված բողոքով բողոքարկում է ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը:

Հատկանշական է, որ Խաչպար ՍՊ ընկերությունը դեռևս 25.12.2019թ.-ի ներկայացված բողոքով բողոքարկել է նույն ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը, և բողոքի քննության ընթացքում ի լրումն բողոքի հիմնավորումներ է ներկայացրել: Նշված բողոքի քննության արդյունքում 20.01.2020թ.-ին գնումների հետ կապված բողոք քննող անձը կայացրել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/98 որոշումը և Խաչպար ՍՊԸ-ի բողոքը բավարարել է՝ պարտավորեցնելով կատարել համապատասխան փոփոխությունները:

Ստացվում է, որ Խաչպար ՍՊ ընկերությունը արդեն իսկ բողոքարկել է ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը (թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/98), բողոքի քննության ընթացքում լրացումներ է ներկայացրել և զրկված չէր 14.02.2020թ.-ին կրկին ներկայացված բողոքով հայտնած դիրքորոշումը 25.12.2019թ.-ին ներկայացված բողոքով հայտնելու հնարավորությունից:

Գնումների մասին ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Սույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից:

Նշված նորմից հետևում է, որ օրենսդրի փրամաբանությունը այն է, որ ընթացակարգը մեկ անձի կողմից բողոքարկվելու դեպքում, ներգրավվեն նաև հնարավոր բողոքարկող մասնակիցները, որի արդյունքում կիրականացվի ամբողջական քննություն և տարբեր մասնակիցների կողմից ներկայացված յուրաքանչյուր բողոք առանձին վարույթով չի իրականացվի, որը ուղղակիորեն կխախտի Պատվիրատուի իրավունքները և կխոչընդոտի վերջինիս գործունեությանը:

Տվյալ դեպքում նույն անձը նույն ծածկագրով ընթացակարգը յուրաքանչյուր անգամ բողոքարկում է որոշակի հիմքերով, այն դեպքում, երբ վերջինս զրկված չի եղել այդ հիմնավորումները սկզբնական բողոքով բողոքարկման ընթացքում ներկայացնելու հնարավորությունից: Նշվածից հետևում է, որ բողոք բերող անձը բողոք է ներկայացնում ոչ այն նպատակով, որ վերջինիս իրավունքները խախտվել են բողոքարկման հիմք ծառայած գործողություններով, այլ ուղղակիորեն բողոք բերող անձը ենթադրաբար չարաշահում է ընթացակարգը բողոքարկելու իր իրավունքը և նպատակ է հետապնդում խաթարել բժշկական կենտրոնի բնականոն աշխատանքը:

Հատկանշական է, որ Խաչպար ՍՊ ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում գրանցված ընկերություն է, տարբեր գնման ընթացակարգերին, որոնք հայտարարվել են միմիայն հայերեն տեքստերով վերջինս մասնակցել և չի բողոքարկել, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ բողոք բերող անձի բողոքարկումը կրում է ձևական բնույթ, բողոքարկման հիմքում նշված հանգամանքներով իր շահերը չեն խախտվել, այլ վերջինիս գործողությունները միտված են բժշկական կենտրոնի բնականոն աշխատանքի խաթարմանը:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/28 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 10.02.2020թ.-ին հայտարարվել է «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերը հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.02.2020թ.-ի ներկայացված բողոքն հիմնավոր է և ենթակա ամբողջությամբ բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ իրավական նորմերի վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին

մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 34-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը հաստատվելու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում քարտուղարը գնումների մասին հայտարարության և հրավերի կամ նախաորակավորման մասին հայտարարության տեքստերը Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով հրապարակում է տեղեկագրում: Ընդ որում հայտարարության և հրավերի տեքստերը, ինչպես նաև գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունները, պայմանագիր կնքելու, կնքված պայմանագրի և ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությունները հրապարակվում են նաև ռուսերեն լեզվով: Ռուսերեն լեզվով հրապարակված նյութերի տարաբնույթ (երկակի) մեկնաբանման հնարավորության դեպքում հիմք է ընդունվում հայերեն տեքստը.

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել, որ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 10.02.2020թ.-ին հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հրավերը պաշտոնական տեղեկագրի՝ www.gnumner.am և www.armeps.am կայքերում առկա տեղեկատվության համաձայն՝ հրապարակված չէ ռուսերեն լեզվով:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» գնանշման հարցման ընթացակարգը հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով գործել է ոչ իրավաչափ, քանի որ քարտուղարը գնման ընթացակարգի հրավերի տեքստը՝ նաև ռուսերեն լեզվով, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի սահմանած կարգով պետք է հրապարակեր տեղեկագրում, սակայն հրապարակել է միայն հայերեն լեզվով:

Նման պարագայում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ խախտվում է Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ գնահատող հանձնաժողովը «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» գնանշման հարցման ընթացակարգի հրավերը ռուսերեն լեզվով չհրապարակելով գործել է ոչ իրավաչափ, խախտելով Կարգի 34-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 14.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/28 ծածկագրով բողոքը բավարարել ամբողջությամբ:

Պարտավորեցնել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կետրոն ՓԲԸ-ին բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով 10.02.2020թ.-ին հայտարարված «ՍԳԼ-ԳՀԱՊՁԲ-20/23» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը հայտարարել չկայացած:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**